Հավելված 6
«ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17»

ք. Ծաղկաձոր «23» օգոստոս 2018թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ա.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Էրեբունի մաքրություն>> ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ.Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծաղկաձոր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 17150000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկաձորի համայնքապետարան	<<Էրեբունի մաքրություն>> ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ,ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	ՀՀ ք.Երևան, Դավիթ-Բեկի 106
	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
ՀՀ ՖՆ ԳՎ	ՀՎՀՀ 00415975
ՀՎՀՀ 03001885	Հ/Հ 163068555081
Հ/Հ 900122002166	Տնօրեն Հ.Խաչատրյան
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 23 » օգոստոս 2018թ. կնքված
<<ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	90611100	Ներկայացված է ստորև	դրամ	17150000	1	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր	Պայմանագիր կնքելու պահից մինչև 31.12.2018թ.

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

Ծաղկաձոր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ

Անհրաժեշտ է իրականացնել Ծաղկաձոր համայնքի փողոցների՝

1. Սանիտարական մաքրում
   - փողոցների ավլում՝ ձեռքով և մեքենայացված եղանակով (փողոցների ցանկը և ավլվող մակերեսները ներկայացվում են)
   - ավելվածքի բարձում և տեղափոխում աղբավայր
   - ձյան մաքրում (աղ – ավազային խառնուրդի, շլակի և այլ սառցակալման դեմ պայքարի միջոցների ձեռք բերում)
2. Համայնքի վարչական տարածքի աղբահանություն՝ համաձայնեցված գրաֆիկին համապատասխան:
3. Աղբահեռացման վարձավճարների հավաքրման կազմակերպում և իրականացում:

Փողոցների, հրապարակների, զբոսայգիների, պուրակների, սիզամարգերի մաքրումը աղրից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, բարձումը ավտոինքնաթափին, տեղափոխումը և տեղադրումը աղբավայրում պետք է իրականացվի շաբաթական 6 օր և տարեկան ոչ պակաս 300 օր պարբերականությամբ:

Փողոցների, մայթերի, աստիճանների, գազոնների ամառային մաքրման ժամանակ հավաքարարը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը, ինչպես նաև պետք է ապահովված լինի սեզոնային համապատասխան ազդանշանային արտահագուստով: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, հավաքարարը նախ և առաջ պետք է մաքրի մայթը ամբողջ լայնությամբ և երթևեկելի մասի մերձվածքային տարածքը 0.75 մ լայնությամբ եզրաքարից հաշված:

Մեքենայացված մաքրումը պետք է իրականացվի հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ, աղբը հավաքելով եզրաքարի տակ, հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո հավաքարարը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, հնարավորին չափով մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից հավաքարարն աղբը և փոշին պետք է մաքրի ավելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ: Կանաչ տարածքների մաքրումը պետք է իրականացնի ուղղակիորեն ձեռքով, այնպես, որ մաքրման ընթացքում բույսերը չվնասվեն:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքվի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա տեղափոխվի:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:

Ձմեռային մաքրման ժամանակ պետք է ապահովվի սպասարկող տարածքի ձյան շերտի մաքրումը, հավաքումը և հեռացումը, ինչպես նաև դրանց երթևեկելի մասերի սառցածածկույթի վերացումը: Բացի այդ, պետք է ապահովվի փողոցների, մայթերի ու քաղաքային հրապարակի մաքրությունը (աղբի ավլումը և հավաքումը) ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Թարմ, դեռևս չամրացած ձյունը մինչև 2սմ հաստության շերտով պետք է մաքրվի ցախավելի միջոցով, իսկ 2 սմ-ից ավելին՝ քերելով (քերիչ-թիակով): Բարելավված ծածկույթ ունեցող տարածքներից ձյունը պետք է մաքրվի լրիվ, իսկ անբարեկարգ տարածություններից՝ ոչ լրիվ, թողնելով ձյան մի շերտ (ամրացած) հետագա տեղումների մաքրելը հեշտացնելու համար:

Տարածքներից հավաքված ձյունը պետք է վերածվի թմբերի կամ կույտերի, որոնք դասավորվեն մայթերին զուգահեռ:

Տրանսպորտի նորմալ երթևեկությունն ապահովելու նպատակով ձնաթմբերը պետք է կուտակվեն այնպես, որ նրանց հիմքերի լայնությունը 1,5 մ-ից ավելի չլինի:

Այնուհետև հավաքված ձյունը պետք է տեղափոխվի կանաչ տարածքները, կամ հեռացվի սպասարկվող տարածքի սահմաններից: Ձյան ամրացումից խուսափելու նպատակով տեղումների սկզբնական շրջանում նպատակահարմար է ձյունը մշակել ավազի և քլորիդների (ըստ տեխնոլոգիայի) խառնուրդով: Սառցակալած կամ պնդացած ձյան շերտը սպասարկվող տարածքներից պետք է մաքրվի այն նախապես քայքայելուց կամ ջարդելուց հետո: Սառցակտորների հեռացումը պետք է կատարվի կոտրելուց և կուտակելուց անմիջապես հետո: Մինչև 2 սմ. հաստությամբ սառցակույտերը, նախքան մաքրումը, պետք է մշակվեն քլորիդներով:

Հավաքված ձյան և սառցե կույտերը մեքենաների միջոցով պետք է հեռացնել փողոցներից:

Ըստ սպասարկվող տարածքների փողոցների, ձմեռային մաքրումը պետք է կատարվի նույն հերթականությամբ, ինչ-որ ամառային մաքրման դեպքում:

Ավլման տակ չներգրավված փողոցների սանիտարական մաքրումը իրականացնել կենցաղային աղբահանության ընթացքում, փողոցում առկա աղբակույտերը բարձել աղբահան մեքենա և տեղափոխել աղբավայր:

Պետք է իրականացվի Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման և փողոցների, տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սահմանված տարածքների սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ,
- աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Ամեն օր համապատասխան վայրերում տեղադրված թվով՝ 58 մեծ և 52 փոքր աղբարկղերը, մաքրել հարակից 1.5-5 մ տարածքը: Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը ավլել և տեղափոխել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով:

Աղբահանությունը կատարվելու է ոչ միայն տեղադրված աղբարկղերի, այլև մասնավոր հատվածում համայնքի ավագանու կողմից սահմանված գրաֆիկով, հատուկ կամ ինքնաթափ մեքենաների շրջայցի միջոցով՝ 3 օրը մեկ անգամ հաճախականությամբ:

Նվազագույնը շաբաթական մեկ անգամ մաքրել համայնքի վարչական տարածք մտնող փողոցները և հարակից տարածքները:

Յուրաքանչյուր պահի ամեն աղբարկղի լցվածությունը առավելագույնը պետք է լինի 80%:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը:

Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը ավել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:

Յուրաքանչյուր մեքենա-մեխանիզմների անսարքության ժամանակահատվածը չի կարող 6 ժամից ավել լինել: Անսարք մեքենա-մեխանիզմների թիվը չի կարող գերազանցել ամբողջ մեքենա-մեխանիզմների 10%-ը:

Համայնքապետարանի կողմից տրամադրվող բազայի հիման վրա իրականացնել աղբահանության վարձավճարների հավաքագրման աշխատանքները, կատարել վճարողների բազայի հաշվառման և սպասարկման գործառույթները:

ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՄԱՅԹԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ՁՅԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՑԱՆԿ	
Անվանումը	Սպասարկվող տարածք /քմ/
Ծաղկաձոր քաղաքի փողոցներ	
Խ.Կեչառեցու /սանիտարական մաքրում, մասնակի ձյան մաքրում /	9100
Մայիսյան /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	6200
Չարենց /սանիտարական մաքրում, մասնակի ձյան մաքրում/	6000
Իսահակյան /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	930
Իսահակյան փակուղի /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	700
Վ.Ճարտարապետի /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1980
Կ.Անդրեասի /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1920
Օրբելի եղբայրների /սանիտարական մաքրում/	7200
Գ.Մագիստրոսի /սանիտարական մաքրում/	2400
Օլիմպիական /սանիտարական մաքրում/	9450
Տանձաղբյուրի /սանիտարական մաքրում/	10500
Պահլավունյաց /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	17400
Սարալանջի /սանիտարական մաքրում/	20625
Մհեր Մկրտչյան /սանիտարական մաքրում/	23300
Չարենցի փակուղի /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1380
Վ.Հարությունյան /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	5220
Ամառանոցային /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1800
Խ.Մուրադյան /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	4200
Անտառային 1-ին թաղամաս /սանիտարական	1200

	մաքրում, ձյան մաքրում/	
	Սարալանջի 1-ին փողոց /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2300
	Ծաղկաձոր քաղաքի մայթեր, բակեր և հրապարակներ	
	Խ.Կեչառեցու փողոցի մայթեր/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2580
	Մայիսյան փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1700
	Չարենցի փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2400
	Իսահակյան փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	740
	Իսահակյան փակուղու մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	200
	Վ.Ճարտարապետի փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	660
	Կ.Անդրեասի փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	640
	Օրբելի եղբայրների փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2800
	Գ.Մագիստրոսի փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1800
	Օլիմպիական փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2700
	Տանձաղբյուրի փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	3750
	Պահլավունյաց փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	3480
	Մ.Մկրտչյան փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	4660
	Չարենցի փակուղու մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	460
	Վ.Հարությունյան փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1740
	Ամառանոցային փողոցի մայթեր /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	510
	Օրբելու հրապարակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1000
	Ծաղկունյաց հրապարակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2300
	Ճեմուղու տարածք/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	4500
	Ուսուցիչների տան բակ /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1400
	Մանկապարտեզի բակ /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	2550
	Օրբելի եղբայրների նրբ. Բակ /սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	1465
	Օրբելի եղբայրների նրբ. 2	250

բակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	
Օրբելի եղբայրների նրբ. 6 բակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	285
Գ.Մագիստրոսի փ. 13 բակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	836
Խ.Կեչառեցու փ. 8 բակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	740
Խ.Մուրադյան փ. 5 բակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	700
Կ.Անդրեասի փ. 13 բակ/սանիտարական մաքրում, ձյան մաքրում/	300

Ինչպես նաև

Զմեռային աշխատանքների նախապատրաստում / աղ-ավազային խառնուրդի, շլակի և այլ քիմիկատների ձեռքբերում/	250խմ

Ծաղկաձոր համայնքի կենցաղային աղբահանության ծառայության մատուցման

հ/հ	Մաքրման գոտին	Չ/մ
1.	Համայնքի տարածքի կենցաղային և արտադրական թափոնների հավաքում, տեղափոխում և տեղադրում աղբավայրում մինչև 15 կմ	3050խմ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներին զուգահ անհրաժեշտ է իրականացնել նաև փողոցներում տեղադրված պլաստմասե և մետաղական աղբամանների դատարկում, հարակից տարածքի մաքրում և ախտահանում՝ համաձայն սանհիգիենիկ նորմերի պահանջների:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիր կնքելու պահից	31.12.2018թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ՀՀ Կոտայքի մարզ,ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002166
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Ս.

ԿԱՏԱՐՈՂ
<<Էրեբունի մաքրություն>> ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Դավիթ-Բեկի 106
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
ՀՎՀՀ 00415975
Հ/Հ 1630685550081
Տնօրեն Հ.Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Ս.

Հավելված N 2
« 23 » օգոստոս 2018թ. կնքված
<<ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90611100	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները	...	...	...	...	...	...	...	4287500	8575000	12862500	17150000	17150000	17150000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ՀՀ Կոտայքի մարզ,ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002166
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Էրեբունի մաքրություն>> ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Դավիթ-Բեկի 106
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
ՀՎՀՀ 00415975
Հ/Հ 163068555081
Տնօրեն Հ.Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.